Հոդված 13. **Ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիներին և սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներին ներկայացվող ընդհանուր պահանջները**

1. Ներհամայնքային և մերձքաղաքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների կանգառները պետք է տեղաբաշխվեն ուղևորների կուտակման հանգուցային կետերում, միջքաղաքայինը՝ միջանկյալ ավտոկայաններում, ապահովեն ուղևորների հարմարավետ ու մատչելի սպասարկումը, անվտանգ մոտեցումը և համապատասխանեն կանգառների շահագործման կանոններին: Փոխադրումների առանձնահատկություններին համապատասխան՝ երթուղու կանգառները կարող են լինել հիմնական, ժամանակավոր և ըստ ուղևորի պահանջի:

2. Ավտոբուսային կանոնավոր փոխադրումները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցները պետք է ունենան երթուղին արտահայտող ցուցատախտակով, երթուղու չվացուցակով և սխեմայով (բացառությամբ ներհամայնքային երթուղիների), սպասարկող կազմակերպության անվանման և գտնվելու վայրի նշմամբ ցուցանակով, ավտոտրանսպորտային միջոցների անվտանգությանը ներկայացվող արտաքին և ներքին կահավորում: Կահավորման պահանջները սահմանվում են տեխնիկական կանոնակարգերով և ստանդարտներով:

3. Ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների ուղեսրահում՝ ուղևորների համար տեսանելի կենտրոնական մասում, փակցվում է ցուցանակ, որը ներառում է անհրաժեշտ տեղեկատվություն ուղևորների և ուղևորափոխադրումն իրականացնող վարորդների իրավունքների ու պարտականությունների մասին:

4. Ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների կանգառների տեղաբաշխումը պետք է համաձայնեցվի ճանապարհային, տեղաբաշխման վարչական տարածքի ճարտարապետական, բնապահպանական մարմինների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավասու ստորաբաժանման (այսուհետ՝ Ոստիկանության իրավասու ստորաբաժանում) ~~«Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ճանապարհային ոստիկանություն)~~, երթուղում երկաթուղային գծանցի առկայության դեպքում՝ նաև երկաթուղային գծանցները տնօրինող համապատասխան մարմինների հետ:

(13-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-17-Ն, 08.02.18 ՀՕ-106-Ն)

Հոդված 27. **Փոխադրումների անվտանգությանը ներկայացվող պահանջները**

1. Ավտոտրանսպորտային միջոցների քաշային (լրիվ քաշը և կամրջակի վրա բեռնվածությունը) և եզրաչափային պարամետրերը փոխադրումների

իրականացման ընթացքում պետք է համապատասխանեն փոխադրման երթուղու ավտոմոբիլային ճանապարհի փաստացի տեխնիկական կարգին և չգերազանցեն երթուղու ուղեգծով տեղաբաշխված կամուրջների, էստակադաների, այլ արհեստական կառույցների բեռնվածության և եզրաչափային պարամետրերի առավելագույնը:

Փոխադրումների պահանջները չբավարարող, ինչպես նաև փոխադրումների անվտանգությանը սպառնացող երթուղիներով փոխադրումների կազմակերպումն արգելվում է:

2. Փոխադրումների ընթացքում ավտոտրանսպորտային միջոցների շարժման արագությունները չպետք է գերազանցեն չվացուցակով կամ ճանապարհային պայմաններով սահմանված արագությունները, շարժման ուղղությունները պետք է համապատասխանեն չվացուցակով նախատեսված ուղեգծին, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

3. Երեխաների զբոսաշրջային և զանգվածային փոխադրումների կազմակերպումը երեք և ավելի ավտոտրանսպորտային միջոցներով իրականացվում է Ոստիկանության իրավասու ստորաբաժանման ~~ճանապարհային ոստիկանության~~ տեղեկացմամբ, ավտոշարասյան հատուկ ավտոտրանսպորտային միջոցի ուղեկցմամբ, փոխադրումն ուղեկցող ավտոտրանսպորտային միջոցներում չափահաս անձանց (15 երեխային մեկ ուղեկցող անձի հաշվարկով) ուղեկցմամբ և հետևյալ պայմաններով.

ա) ավտոբուսների շարժումը պետք է իրականացվի օրվա լուսավոր ժամերին.

բ) միանգամյա՝ մինչև երկու ավտոտրանսպորտային միջոցով փոխադրումների իրականացման դեպքում՝ 60 կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ և մոտակա լուսարձակների միացմամբ.

գ) զանգվածային փոխադրումների իրականացման ընթացքում՝ ավտոշարասյան ուղեկցմամբ՝ 40 կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ.

դ) ուղեկցող անձը պետք է երեխաներին հրահանգավորի փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկայի և պահվածքի կանոնների վերաբերյալ, ավտոբուսի շարժման, նստեցման և իջեցման ժամանակ կարգ պահպանի:

Զբոսաշրջային և հատուկ փոխադրումներ իրականացնելու դեպքում խմբերի ղեկավարների ընտրությունը, ավտոբուսից օգտվելու և ուղևորության ընթացքում վարքագծի մասին հրահանգավորումն իրականացնում է պատվիրատուն:

Երեխաների զբոսաշրջային և հատուկ փոխադրումներ իրականացնելու դեպքում ավտոբուսի լուսամուտները շարժման ընթացքում պետք է լինեն փակ, ուղեկցողները գտնվեն յուրաքանչյուր դռան մոտ:

4. ***(մասն ուժը կորցրել է 16.12.16 ՀՕ-17-Ն)***

5. Ուղևորների, ուղեբեռների և բեռների փոխադրումների իրականացումը թույլատրվում է ավտոտրանսպորտային միջոցների՝ արտադրող գործարանի կողմից կամ օրենքով սահմանված կարգով թույլատրված նստատեղերի և բեռնվածության սահմաններում:

6. Ավտովարորդի աշխատանքային հերթափոխի՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նորմատիվային տևողությունը գերազանցող միջպետական և միջքաղաքային երթուղիների սպասարկումը պետք է կազմակերպվի երկու ավտովարորդով, ավտոտրանսպորտային միջոցները պետք է կահավորված լինեն քնելու տեղով:

(27-րդ հոդվածը փոփ., լրաց. 16.12.16 ՀՕ-17-Ն)